2021, № 1, 61-64 *Գրքերի տեսություն*

Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ, Վ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ, Է. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ, ԵՐԵՎԱՆ, «ԱՆՏԱՐԵՍ» ՀՐԱՏ., 2020, 628 էջ

Նոբելյան մրցանակի դափնեկիր Վասիլի Լեոնտևը, անդրադառնալով 1980-ական թվականների վերջերին ԽՍՀՄ-ում տնտեսական համակարգի շուկայական փոխաձևության առաջին տեղաշարժերին, նկատում է. «Ես հրապուրվում եմ առագաստային սպորտով և երբ ուսանողներին բացատրում եմ, թե ինչպես է գործում երկրի տնտեսությունը, այն համեմատում եմ ծովում գտնվող մարզանավի հետ: Որպեսզի գործերը լավ ընթանան, անհրաժեշտ է քամի. դա շահագրգռվածությունն է, ղեկը՝ պետական կարգավորումը: Ամերիկյան տնտեսությունը թույլ ղեկ ունի: Չի կարելի անել այնպես, ինչպես Ռ. Ռեյգանն էր ասում, թե բարձրացրեք առագաստները, թող դրանք քամով լցվեն, իսկ դուք գնացեք խցիկը՝ կոկտեյլ խմելու: Այդպես առագաստանավը մեզ կարող է հասցնել քարաժայռերին և ջարդուփշուր անել: ԽՍՀՄ-ում այժմ հակառակն է. քամին չի ուռչեցնում առագաստանավերը, իսկ այս դեպքում ղեկն էլ չի օգնում: Կարծում եմ՝ ավելի ճիշտ են վարվում ճապոնացիները: Նրանց մոտ իհարկե առկա է մասնավոր նախաձեռնություն, բայց և պետությունը խաղում է մեծ դեր՝ ազդելով տնտեսության լավագույն ուղղությամբ զարգացման վրա»[1]: Արդի տնտեսական բոլոր համակարգերը խառը համակարգեր են, որոնցում պետությունը և շուկան բաժանում են տնտեսության առջև ծառացած հարցերի պատասխանները գտնելու գործառույթները: Դրանց քանակական չափակցումը պայմանական բնույթի է, և իրողությունն այն է, որ հազիվ թե կարելի է գտնել գործունեության մի բնագավառ, որտեղ պետությունը մասնակցություն չունենա: Այնուամենայնիվ, տնտեսագիտական միտքը իր էվոլյուցիայի ընթացքում մշակել է որոշակի գործիքակազմ, որը կոչված է ժամանակին, տեղին և պայմաններին համապատասխան պահպանելու տնտեսության հավասարակշռությունը, որը կարող է ենթարկվել ոչ ցանկալի մեծ խախտումների, եթե հիմնված լինի միայն շուկայական համակարգի «ինքնակարգավորման» անդեմ սկզբունքի վրա: Տնտեսական կյանքի հենց այդ վիճակները կանխելու կամ ստեղծված իրավիճակներից ելքը՝ այն է՝ կառավարման գործիքակազմը գոր-

[1] “Правда”, 27 февраля 1989.

ծողության մեջ դնելու վերլուծականներն է ակնկալում Ա. Մարկոսյանի, Վ. Խաչատուրյանի, Է. Մաթևոսյանի «Ժամանակակից պետության տնտեսագիտություն» խորագրով մատենաշարի երկրորդ գիրքը:

Այն, որ գործիքակազմի առաջին հորիզոնականը հատկացնում են հարկաբյուջետային քաղաքականությանը, արդարացված է դասական ճանաչում ստացած այն դրույթով, թե «հարկը կառավարման մեքենայի տնտեսական հիմքն է» (Կ. Մարքս): Հարկի՝ որպես «պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով պարտադիր վճարի»՝ դասագրքային կամ բառարանային բնորոշումները շատ նեղ են այն բնութագրելու համար: Դրանում ինչ-ինչ կողմերի թվաբանական ճշմարտություններից անդին են ի հայտ գալիս նրա առանձնահատկությունները: Ահա թե ինչու հեղինակները, անդրադառնալով հանրապետության հարկային համակարգի հարցերին, սրում են խնդիրը դիտելու տեսադաշտը, ինչը թույլ կտա առավել հստակ ուրվագծել դրա իմացաբանական ընդհանուր «էությունը, հավաստիությունը և ռացիոնալությունը» (էջ 184):

Փողի քանակը համեմատվում է օրգանիզմի ճարպի հետ, որի ավելցուկը նույնքան վնասակար է, որքան և դրա պակասը: XVII դարի տնտեսագետ Վ. Պետիից եկող այդ ճշմարտությունը պարունակում է տնտեսական վերելքների և վայրէջքների պատճառականության պատասխանները: Երկրի մակրոտնտեսական կայունությունը մեծապես կախված է դրամավարկային քաղաքականությունից: XX դարի տնտեսագիտության երկու հիմնական հոսանքները՝ քեյնսականությունն ու մոնետարիզմը, տարակարծիք են որոշ հարցերում: Առաջինները դրամավարկային քաղաքականության հիմքում տեսնում են տոկոսադրույքի որոշակի մակարդակը, երկրորդները՝ կարևորում փողի առաջարկը: Մեկի կամ մյուսի ճշմարտությունը կամ սխալը հաստատող աքսիոմատիկ պատասխաններ չկան: Թվում է՝ Ջ. Մ. Քեյնսի ուսմունքում ավելի շատ տեսություն կա, իսկ տեսության մեջ՝ ավելի շատ ուսմունք: Մոնետարիզմը չունի քեյնսականության հստակությունը, բայց այն ուժեղ է կանխավարկածների փորձարարական ստուգաբանությամբ: Մի առիթով Քեյնսը նկատել է. «Մենք բոլորս սովորել ենք այն բանին, որ մերթ հայտնվում ենք լուսնի մի կողմում, մերթ՝ մյուս՝ պատկերացում չունենալով այն մասին, թե որ ճանապարհն է միացնում այդ երկու կողմերը»: Անգլիացի տնտեսագետ Պիտեր Բրաունինգը կազմել է «լուսնային քարտեզ», որը ներկայացնում է տարբեր դպրոցների հայեցակարգերի համեմատությունների ընդհանրացված արդյունքները[2]: Ընդ որում, նա հայացքների զարմանալի նմանություն է հայտնաբերում քեյնսականության և մոնետարիզմի միջև: Ահա թե ինչու գրախոսվող աշխատության հեղինակները նշված տեսությունների հանգամանալից վերլուծությունը-

[2] Տե՛ս **Браунинг Питер**, Современные экономические теории - буржуазные концепции. М., 1984, էջ 144, 146-151:

ներով ասելիքը իմաստավորում են ոչ թե հակադրականության ավելի շատ տարածված տեսակետից, այլ, տնտեսական զարգացման տարբեր մոդելներով պայմանավորված, «ավելի շուտ միմյանց համալրող, քան բացառող» լրացուցչության սկզբունքից (էջ 271)։

Կան երևույթներ, որոնք այնքան շատ չեն աղարտում տնտեսական ու հասարակական կյանքը, որքան մակրոտնտեսական անկայունություն ենթադրող սղաճն ու գործազրկությունը։ Եթե տնտեսության ցիկլային զարգացումը օրինաչափ երևույթ է, որը ենթադրում է սղաճի ու գործազրկության գոյությունը, ապա դա չի նշանակում, թե պետությունը պետք է ստանձնի լոկ դիտորդի դերը՝ պայմանավորելով դրանք կանխելու որոնումների անհրաժեշտությունը։ Թվում է՝ թե աշխատության հեղինակները ներկայացնում են տեսության մեջ աքսիոմի իրավունք ստացած այդ երևույթները ծնող պատճառների ու հետևանքների ճշմարտություններ, սակայն բացատրությունների ընդհանուր հոսքերը պատկերացում են տալիս դրանցով պայմանավորված սոցիալական դժվար փոխհատուցվող ծախքերի աճը մեղմելու մեխանիզմների՝ որպես ազգային տնտեսության կարևորագույն խնդիրների մասին։

Գրքում կարևորվում են երկրի ֆինանսական կացության իմացության մի այլ շերտի՝ արտաքին պետական պարտքի մասին դիտարկումները։ Վարկը, լինելով կարևոր գործիք երկրի ձեռնարկատիրական իրական հատվածի խթանման համար, կարող է ունենալ վտանգավոր էֆեկտներ։ Զուր չէ ասված, թե բանկը մի հաստատություն է, որը պարզ եղանակին հովանոցներ է բաժանում և հետ պահանջում, երբ անձրև է սկսվում։ Արտաքին պետական պարտքը ենթադրում է բազմաթիվ խճճված հետևանքներ, որոնք ներկայացվում են «Փոխատվական կապիտալի շուկան», «Միջազգային վարկի էությունն ու դրամատրման պայմանները», «Արտաքին պարտքի կառավարումը, «Արտաքին պարտքի ռիսկերի գնահատումները», «Արտաքին պարտքի վերաձևակերպումը», «Համաշխարհային պարտքային ճգնաժամի դրսևորումը» և այլ բաժիններում։ Այդ դիտողությունները տեսության տարբեր ուղղությունների դրույթների կամ վիճակագրական տվյալների էմպիրիկ կապակցություններ չեն, այլ հանրապետության՝ վերջին տասնամյակների արտաքին պարտքի արդյունավետության գործակիցների համեմատական վերլուծություն, որոնց տատանողական պատկերը ուրվագծում է օգտագործման ցածր արդյունավետություն։ Ավելին՝ «արտաքին պետական պարտքի հավելաճի և զբաղվածների թվաքանակի փոփոխության միջև նկատվել է հակադարձ փոխկախվածություն, այսինքն՝ արտասահմանյան վարկերի ներգրավումը չի նպաստել հանրապետությունում աշխատատեղերի ավելացմանը, այլ ընդհակառակը՝ արտաքին պետական պարտքի ավելացումը, անգամ ՀՆԱ-ի առաջանցիկ աճի տեմպերի պայմաններում, հանգեցրել է զբաղվածության մակարդակի նվազմանը» (էջ 502)։

«Ժամանակակից պետության տնտեսագիտություն» գիրքը կամրջում է աշխատության սկզբում ներկայացված հանրապետության սոցիալ–տնտեսական հիմնախնդիրները և հետագա ու հատկապես վերջին շրջանի իրողությունները: Եթե 1990-ական թվականներին հանրապետության սոցիալ-տնտեսական փոխակերպության հիմքում գործում էր այսպես կոչված ազատական տնտեսություն կերտելու գործիքակազմը, ապա հետագա շրջանը բնութագրվեց «պետական միջամտության» գործառույթի աճով՝ ձևավորելով արդարության և ազատության արժեքների դեֆիցիտային հասարակություն: Ընդհանուր գծերով ուրվագծելով ազատության և արդարության վերաբերյալ տնտեսագիտական մտքի որոնումների հյուսվածքը (Ջ. Քեյնս, Կ. Փոփեր, Լ. Միզես, Ֆ. Հայեկ և ուրիշներ)՝ հեղինակները սոցիոլոգիական հարցումների արդյունքներով փաստում են, որ հասարակության արժեքային համակարգի ութ բաղադրիչների շարքում (արդարություն, ազատություն, համերաշխություն, համախմբվածություն, ինքնասահմանափակում և զոհաբերություն, հայրենասիրություն, մարդու նկատմամբ բարություն, ընտանեկան ավանդույթներ) առաջնային են ճանաչվել արդարության (36%) և ազատության (22%) արժեքները (էջ 46):

Իմ նպատակը չէ մեկ առ մեկ անդրադառնալ աշխատության բոլոր արծարծումներին, նշեմ միայն, որ այն, ինչպես և առաջին հատորը, ուղեցույց է ընտրել տնտեսագիտության գիտական եզրակացությունները հանրամատչելի դարձնելու և մարդկանց արդի տնտեսագիտության գիտելիքներով հարստացնելու սկզբունքը, տնտեսական քաղաքականության մեջ ճանաչելու իրականի և անիրականի սահմանները:

Յ. Գյոթեն նկատում է, թե «մոլորությունները մարդուն դարձնում են սիրո արժանի»: Գերմանացի տնտեսագետ Խորստ Զիբերտը շարունակում է. «Թող այդպես լինի, բայց երբ մոլորությունները դառնում են պաշտոնական դոկտրին՝ ստեղծված պետության տնտեսական քաղաքականության ոլորտում որոշումների ընդունման համար, շատերն են տառապում[3]»: Այն, ինչ կատարվել է հանրապետությունում:

ՌՈԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ

[3] **Хорст Зиберт**, Эффект кобры, М., 2005, էջ 13: